ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2023Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԿԻՐԱԲԵՐԵԼ

zinapah.am

Բովանդակություն

Հիմնադրամի կառավարում և ֆինանսական վերլուծություն

ԶԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017 – 2023թթ. սահող գնահատականներով (ՍԳ)
ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2023 1-ին եռամսյակում
ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017 – 2023թթ. 1-ին եռամսյակում
ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրերը և համագործակցությունը
ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2022թ. աուդիտորական հաշվետվություն*

*Աուդիտորական հաշվետվությունը կհրապարակվի 2023թ. 2-րդ եռամսյակի սկզբում: 2022թ. տարեկան հաշվետվության ֆինանսական մասը կճշգրտվի ըստ 2022թ. Աուդիտորական հաշվետվության արդյունքների:

Թիմը

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Տաթևիկ Յաղջյան
ԳԳՏ տեղակալ
Գործառնությունների գծով տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Մնացական Ավետիսյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Ադմինիստրատիվ օգնական

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

ԶԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

Զինապահը ստեղծվել 2017թ.-ին՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին և 1-ին ու 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինվորներին կայուն, արդար ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության: Հիմնադրամը ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն **ՀՀ Օրենքի**:

Զինապահը եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի և Արցախի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: Հիմնադրամը համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինվորների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

Զինապահի միջոցները գոյանում են՝

- Հայաստանի և Արցախի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամուտից)
- Նվիրաբերություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից
- Զինապահի ակտիվների կառավարումից:

Զինապահը կառավարվում է անկախ Հոգաբարձուների խորհրդի կողմից՝ բարձր հեղինակություն վայելող մարդիկ, ովքեր մեծ փորձառություն ունեն ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

Զինապահի կառավարման մաս է կազմում նաև բարձր մոտիվացիայով և փորձառու երիտասարդ գործառնական թիմը:

Զինապահի կայքը հնարավորություն է տալիս տեսնել բոլոր ֆինանսական հոսքերը նվիրաբերությունների և պարտադիր վճարների տեսքով, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: Զինապահի կայքում հրապարակվում են գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված Տարեկան աուդիտի հաշվետվությունները:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել

զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած

մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ՆԱԽԱԲԱՆ

Կարինե Սարգսյան
Գործադիր գլխավոր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

2020թ. պատերազմից հետո 2021թ. ԶԻՆԱՊԱՀԻ համար եղավ ճգնաժամի կառավարման տարի, ինչպես գործառնական, այնպես էլ կառուցվածքային առումով: Իսկ 2022թ. վերականգնման տարի էր՝ ակտիվների պահուստավորման և ամսական կանոնավոր հատուցումների վճարման առումով: Զուգահեռաբար տարվել են աշխատանքներ ԶԻՆԱՊԱՀԸ վերակազմակերպելու և որպես ինստիտուցիոնալ կառույց կայացնելու ուղղությամբ՝ կենտրոնանալով ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույց հիմնական գործառույթի վրա: 2022թ. սեպտեմբերի 12-13-ի պատերազմական գործողությունների էսկալացիան ավելացրեց ԶԻՆԱՊԱՀԻ պարտավորությունները 230 շահառուներով:

2017-2022թթ. ԶԻՆԱՊԱՀՆ արձանագրել է շուրջ 117.5 մլրդ ՀՀ դրամ եկամուտ՝ հիմնականում պարտադիր վճարներից, նվիրաբերություններից և ակտիվների կառավարումից և կատարել 71.0 մլրդ ՀՀ դրամի հատուցումներ:
Թեև հուսով ենք, որ տարածաշրջանը վերջապես կխաղաղվի, սակայն դժվար է կանխատեսել, թե ԶԻՆԱՊԱՀԸ և մեր համայնքը ինչ նոր մարտահրավերների առջև կկանգնեն: 2023թ. կշարունակի մնալ կազմակերպչական կայուն զարգացման և ինստիտուցիոնալացման տարի. բավականին բարդ և անորոշ միջավայրում:

2023թ. ԶԻՆԱՊԱՀԻ համար անցումային տարի է դեպի հասուն ինստիտուցիոնալ կազմակերպություն, որտեղ թիմի անդամներն ունեն մասնագիտական զարգացման և աճի պլանավորում՝ միտված լավագույնս սպասարկելու և աջակցելու շահառուներին: ԶԻՆԱՊԱՀԸ շարունակելու է իր ուժերի շրջանակներում անդրադառնալ այն մարտահրավերներին, որոնց բախվում են մեր շահառուները: Հայաստանում և Արցախում յուրաքանչյուր պարտադիր դրոշմանիշային վճար վճարողի և մեր նվիրաբերողների աջակցությամբ ԶԻՆԱՊԱՀԸ շարունակելու է բարեփոխումներ իրականացնելը:

Մենք կշարունակենք զարգացման մեր ուղին մեր կառավարության, այլ շահագրգիռ կողմերի, նվիրաբերողների և գործընկերների աջակցությամբ՝ դրական փոփոխություն կատարելով ԶԻՆԱՊԱՀԻ համայնքում:

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները
2017 – 2023թթ. Սահող Գնահատականներով (ՍԳ)

2023թ. 1-ին եռամսյակի կատարողականով և մինչև տարվա վերջը մնացած ժամանակահատվածի սահող գնահատականով, կանխատեսվում է, որ ԶԻՆԱՊԱՀԸ կունենա մոտավորապես 17% եկամտի աճ, որը կկազմի 163.4 մլրդ ՀՀ դրամ. սա պայմանավորված է պարտադիր վճարների 18% աճով և ակտիվների կառավարման եկամուտների 18% աճով, չնայած նվիրաբերությունների զգալի անկմանը -25% չափով: Ընդհանուր ծախսերը կանխատեսվում են նվազել -5%-ով և կկազմեն 16.3 մլրդ ՀՀ դրամ: Գնահատվում է, որ հատուցումները կնվազեն -5%-ով, քանի որ շահառուները ստանում են միայն իրենց ամսական հատուցումները:

Գնահատվում է, որ 2023թ. Հիմնադրամի եկամտի այն մասը, որը վերագրվում է պարտադիր վճարներին, կմնա կայուն 90%, ինչպես 2022թ-ին: Գնահատվում է նաև, որ ակտիվների կառավարմանը և նվիրաբերություններին վերագրվող եկամտի մասը կմնա անփոփոխ՝ համապատասխանաբար 8% և 1%:

ԶԻՆԱՊԱՀԻ ծախսերը գնահատվում են, որ կնվազեն -5%-ով նախորդ տարվա համեմատությամբ, ինչը բացատրվում է դեպքերի ցածր թվի կանխատեսումով: Վարչական ծախսերի 26% աճը չի գերազանցում կանխատեսված բյուջետային 33%-ը: Աճը բացատրվում է պատվիրակված ծառայությունների միջնորդավճարների աճով, 1-ին եռամսյակում աշխատակազմի կրճատման հետ կապված վճարումներով, աշխատակազմի աշխատավարձերի վերանայումով, ինչպես նաև դրոշմանիշային վճարների վերադարձի կազմակերպման համար թիմի ներգրավվածության դիմաց վճարումներով:

ՄԼՐԴ ԴՐԱՄ	2017	2018	2019	2020	2021	2022	2023 ՍԳ	2017-2023 ՍԳ	2023 ՍԳ / ՆԳ	% հարաբ. 2022	% հարաբ. 2023
Եկամուտ պարտադիր վճարներից	5.9	7.4	8.5	9.1	29.1	35.3	41.5	136.8	18%	90%	90%
Նվիրաբերություններ	0.1	0.1	0.1	7.0	1.3	0.5	0.4	9.5	-25%	1%	1%
Կամուրջ*	-	-	-	1.0	1.5	0.2	0.2	3.0	-3%	1%	1%
ՀՀԿԲ**	-	-	-	-	0.3	-	-	0.3	-100%	0%	0%
Ակտիվների կառավարում	0.2	0.8	1.6	2.4	1.8	3.3	3.8	13.9	18%	8%	8%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	-	-	-	-	-	0.0	-100%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**6.2**	**8.3**	**10.2**	**19.5**	**34.0**	**39.3**	**46.0**	**163.4**	**17%**	**100%**	**100%**
Հատուցումներ	0.4	0.4	0.8	8.0	44.5	16.8	16.0	87.0	-5%	98%	98%
Վարչական ծախսեր	-	-	-	-	-	0.2	0.3	0.6	26%	1%	2%
Կապիտալ ծախսեր	-				0.1	0.0	0.0	0.1	-6%	0%	0%
Գործառնական ծախսեր	-	-	-	-	0.1	0.0	0.0	0.2	27%	0%	0%
Այլ	-	0.0	0.0	-	-	-	-	0.0		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**0.4**	**0.4**	**0.8**	**8.0**	**44.7**	**17.1**	**16.3**	**87.9**	**-5%**	**100%**	**100%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԱՀ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհայտ բացակայող զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 27 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրումը - 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017-2023թթ. ֆինանսական տարիների համար, Սահող Գնահատականով (ՍԳ)

Ենթադրվում է, որ 2023թ. 2022թ. համեմատությամբ ընդհանուր եկամուտը կաճի 17%-ով, իսկ ընդհանուր ծախսերը կնվազեն -5%-ով:

Կանխատեսվում է, որ 2023թ., ինչպես որ 2022թ., կգրանցվի կայուն եկամուտ 90%-ի չափով պարտադիր վճարներից, ինչը բացատրվում է.

- Զբաղված բնակչության ընդհանուր թվի 6% աճով՝ 699 հազար*
- Ընկերությունների թվի 12% աճով՝ 64.1 հազար*
- Միջին աշխատավարձի չափի 21% բարձրացումով մինչև 250.1 հազար ՀՀ դրամ
- 1 մլն և ավել ՀՀ դրամ աշխատավարձ ստացող աշխատողների կողմից դրոշմանիշային վճարի աճ 48%-ով՝ համաձայն ՊԵԿ-ի պաշտոնական հաշվետվության:
- Ի հակադրություն՝ նվիրաբերությունների մասնաբաժինը կանխատեսվում է, որ կնվազի -25%-ով, ինչը օրինաչափ դանդաղում է, եթե հաշվի առնենք, որ ներդրումներ չեն կատարվել նվիրաբերողների բազան համալրելու համար, ինչպես նաև նկատվել է նվիրաբերությունների հետպատերազմյան անկման օրինաչափ միտում:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-23թթ. եկամուտը ծախսերի համեմատ. ՍԳ ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ



Աշխատավարձի սահմանաչափ	Մինչև 100,000 ՀՀ դրամ		100,001-200,000 ՀՀ դրամ		200,001-500,000 ՀՀ դրամ		500,001-1,000,000 ՀՀ դրամ		1,000,001 և ավել ՀՀ դրամ		Ընդամենը՝ դեկ. 2022	
000 000	Աշխատողների քանակ	Դրոշմանիշային վճար	Աշխատողների քանակ	Դրոշմանիշային վճար	Աշխատողների քանակ	Դրոշմանիշային վճար	Աշխատողների քանակ	Դրոշմանիշային վճար	Աշխատողների քանակ	Դրոշմանիշային վճար	Աշխատողների քանակ	Դրոշմանիշային վճար
	0.222	333	0.198	595	0.183	1,006	0.065	556	0.038	574	0.707	3,063
2022թ. դեկտ. 2021թ. դեկտ. համեմատ	0%	0%	1%	1%	12%	12%	23%	23%	48%	48%	7%	15%

* Աղբյուրը՝ Armstat.am համեմատությունը արվել է 2022թ-ն՝ 2021թ-ի դեկտեմբերի համեմատ:

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017 – 2023թթ. 1-ին ԵՌ.

2023թ. 1-ին եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԸ գրանցել է եկամտի աճ 24%-ով նախորդ տարվա համեմատությամբ, շուրջ 11.8 մլրդ ՀՀ դրամ, ինչը պայմանավորված է դրոշմանիշային վճարների 18% աճով, ակտիվների կառավարումից ստացված եկամուտի 173% աճով, չնայած նվիրաբերությունների -53% անկմանը: Ընդհանուր ծախսերը աճել են 7%-ով և կազմում են 3.9 մլրդ ՀՀ դրամ, իսկ հատուցումները աճել են 7%, քանի որ հատուցվում են միայն ամսական կանոնավոր պարտավորությունները:

2023թ. 1-ին եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԻ եկամտի մասնաբաժինը, որը վերագրվում է պարտադիր վճարներին, կազմել է 89%: Ակտիվների կառավարումից ստացված եկամտի մասնաբաժինը 10% է՝ կամ 6 տոկոսային կետով ավել նախորդ տարվա համեմատ, մինչդեռ նվիրաբերությունների մասնաբաժինը նվազել է մինչև 1%՝ նվազելով 1 տոկոսային կետով:

2023թ. 1-ին եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԻ ծախսերը աճել են 7%-ով: Վարչական ծախսերի 21% աճը չի գերազանցում կանխատեսված տարեկան բյուջետային 33%-ը: Աճը բացատրվում է պատվիրակված ծառայությունների միջնորդավճարների աճով, 1-ին եռամսյակում աշխատակազմի կրճատման հետ կապված հավելյալ վճարումներով, աշխատակազմի աշխատավարձերի վերանայումով, ինչպես նաև դրոշմանիշային վճարների վերադարձի կազմակերպման համար թիմի ներգրավվածության դիմաց վճարումներով:

ՄԼՐԴ ԴՐԱՄ	ԵՌ1 2022	ԵՌ1 2023	ԵՌ1'23 համ. ԵՌ1'22	% հարաբ. ԵՌ1'22	% հարաբ. ԵՌ1'23
(ԴՐԱՄ)					
Եկամուտ պարտադիր վճարներից	8.9	10.5	18%	94%	89%
Նվիրաբերություններ	0.5	0.1	-53%	2%	1%
Կամուրջ*	-	0.1		0%	1%
ՀՀԿԲ**	-	-		0%	0%
Ակտիվների կառավարում	0.4	1.1	173%	4%	10%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**9.5**	**11.8**	**24%**	**100%**	**100%**
Հատուցումներ	3.6	3.9	7%	99%	98%
Վարչ. ծախսեր	0.1	0.1	21%	1%	2%
Կապ. ծախսեր	0.00	-	-100%	0%	0%
Գործառնական ծախսեր	0.00	0.01	59%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**3.7**	**3.9**	**7%**	**100%**	**100%**

*- Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհայտ բացակայող զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 27 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

**- ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից

2023թ.-ի ՍԳ համեմատությունը 2017-2023թթ. հետ. ամփոփ պատկերը

- Պարտադիր վճարների 30%-ը կստացվի 2023թ.
- Ակնկալվում է, որ նվիրաբերությունների 4%-ը կստացվի 2023թ.
- Ակտիվների կառավարման եկամտի 28%-ը կձևավորվի 2023թ.
- Հատուցումների 18%-ը կվճարվի 2023թ.

'000 000 AMD	2022	2023 ՍԳ	2017-2023 ՍԳ	% հարաբ 2023
Պարտադիր վճարներ	35.27	41.53	136.79	30%
Նվիրաբերություններ	0.51	0.38	9.46	4%
Ակտիվների կառավարում	3.26	3.84	13.91	28%
Հատուցումներ	16.85	16.01	87.00	18%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2023թ.

- **2017-2023թթ. 1-ին եռամսյակի** տվյալով ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,142** շահառուների: 2023թ. 1-ին եռամսյակում գրանցվել են **52 նոր դեպքեր**

- **2023թ. 1-ին եռամսյակի** 52 նոր դեպքերի բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման

ԶՈՀՎԱԾ **33**

ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ **6**

1-ին կարգ **1**

2-րդ կարգ **12**

2023թ. 1-ին եռամսյակի ԶԻՆԱՊԱՀԻ հատուցումները՝ ըստ զինվորական կազմի եվ կոչման, 52 դեպքով



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2017-2023թթ. 1-ին եռամսյակ

2017-2023թթ. 1-ին եռամսյակի **5,142 դեպքերը** ստորև բաշխված են ըստ շահառուների դասակարգման:
45% ժամկետային շարքայիններ են, մինչդեռ **38%** զորահավաքային շարքայիններ, սպաներ և կամավորականներ:

2017-2023թթ. 1-ին եռամսյակի ԶԻՆԱՊԱՀԻ հատուցումները՝ ըստ զինվորական կազմի եվ կոչման, 5,142 դեպքով



2017-2023թթ. 1-ին եռամսյակի ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները՝ 5,142 դեպքով





2017-2023ԹԹ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

52

Նոր հատուցման դեպքեր 2023թ. 1-ին եռամսյակում և 5,142 դեպքեր 2017-2023թ. 1-ին եռամսյակում

3.9

մլրդ ՀՀ դրամի հատուցում 2023թ. 1-ին եռամսյակում և 74.9 մլրդ ՀՀ դրամի հատուցում 2017-2023թթ. 1-ին եռամսյակում որպես ապահովագրություն զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

Ակնկալվում է 18%

պարտադիր վճարի աճ 2023թ. վերջին 2022թ. համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրաբերությունները 2017-2023թթ. ֆինանսական տարվա 1-ին եռամսյակում

2017թ. մինչև 2023թ. 1-ին եռամսյակը ԶԻՆԱՊԱՀԻ նվիրաբերությունները կազմել են շուրջ 9.2 միլիարդ ՀՀ դրամ: Նվիրաբերությունների ընդհանուր թիվը կազմում է գրեթե 85 հազար՝ միջին նվիրաբերության գումարը՝ 99,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրաբերությունները կատարվել են 2020թ. պատերազմի ժամանակ և դրանից հետո:

Համեմատած 2022թ. 1-ին եռամսյակի հետ՝ ընթացիկ նվիրաբերությունները նվազել են -53%-ով 2023թ. 1-ին եռամսյակում: Նվիրաբերությունների թիվը և միջին չափը նույնպես նվազել են՝ համապատասխանաբար -53%-ով և -1%-ով: Դա բացատրվում է հետպատերազմյան իրավիճակով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրաբերությունները սովորաբար կտրուկ աճ են ցույց տալիս, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում: Նվիրաբերությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև ԶԻՆԱՊԱՀԻ կայքի՝ www.zinapah.am միջոցով:

2017-2023թթ. 1-ին եռամսյակի նվիրաբերությունները ըստ արժույթի

Արժույթը, ' 000 000	2017	2018	2019	2020	2021	2022	2022 1-ին եռամ.	2023 1-ին եռամ.	2017-2023 1-ին եռամ.	2023 1-ին եռ. նախորդ տարվա համեմատ
ՀՀ դրամ	94	89	113	4,380	766	301	75	35	5,744	-53%
Դոլար		0.002	0.005	4.83	0.879	0.492	0.137	0.107	6	-22%
Ռուբլի		0.08	0.08	115	6.52	0.46	0.440	-	122	-100%
Եվրո		0.0008	0.0004	0.80	0.1224	0.0341	0.010	0.007	1	-30%
2017-2023թթ. 1-ին եռամսյակի նվիրաբերությունները ՀՀ դրամով										
Նվիրաբերությունների քանակ	94	95	115	6,976	1,290	508	173	81	9,159	-53%
	445	1,050	1,312	41,769	25,976	12,665	3,550	1,672	84,889	-53%
Նվիրաբերությունների միջին չափը	0.21	0.09	0.9	0.17	0.05	0.04	0.05	0.05	0.099	-1%

2017-2023թթ. 1-ին եռամսյակի նվիրաբերությունները



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն

ԶԻՆԱՊԱՀԸ համագործակցում է տարբեր հիմնադրամների, ոչ պետական և բարեգործական կազմակերպությունների հետ՝ աջակցելով մեր զինծառայողներին և նրանց ընտանիքներին, նրանց ֆիզիկական, հոգեբանական և կրթական բարեկեցության ապահովման նպատակով: Հաշվի առնելով շահառուների հետ կապի պահպանման կարևորությունը՝ ԶԻՆԱՊԱՀԻ թիմը քայլեր է նախաձեռնել իր շահառուների հետագա զարգացման և սոցիալական ինտեգրման ծրագրերի մեկնարկի ուղղությամբ:

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ընդլայնել համագործակցող ընկերությունների ցանկը և նոր համագործակցության հուշագրեր է ստորագրում: Մեր նպատակն է համախմբել, միավորել և համակարգել պետական, մասնավոր հատվածը, ՀԿ-ներին և բարեգործական կազմակերպություններին զինծառայողներին և նրանց ընտանիքներին աջակցելու գաղափարի շուրջ:

Ֆինանսական աջակցություն Վարդանյան ընտանիք բարեգործական հիմնադրամից

Հայոց բանակի օրվա առիթով՝ հունվարի 28-ին, **Վարդանյան ընտանիք բարեգործական հիմնադրամն** աջակցեց 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների անչափահաս երեխաներին, ովքեր նաև ԶԻՆԱՊԱՀԻ շահառու ընտանիքներն են:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառու 1,098 ընտանիք ստացել է միանվագ դրամական աջակցություն 330,000 ՀՀ դրամի չափով: Նախաձեռնության ընդհանուր բյուջեն կազմել է 30 մլն ՀՀ դրամ: Մանրամասները՝ հետևյալ հղումով.

https://www.youtube.com/watch?v=jzurq9RbI74&t=2s

https://hraparak.am/post/ceb8331de2e19d9047e93a32e06bde4a?fbclid=IwAR3EcvCY7F0QWAWBwqGpsRKg2rs9oEMW6N2KPKjBFV2uRgNv5uDwbGoDFYE

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն

Ֆինանսական աջակցություն Կարո Հովագիմյան բարեգործական հիմնադրամից

2023թ. հունվարին **Կարո Հովագիմյան բարեգործական հիմնադրամը** ֆինանսական աջակցություն տրամադրեց ԶԻՆԱՊԱՀԻ 22 շահառուների Ծվեդիայի հայ համայնքի բարեգործական միջոցառման ժամանակ հավաքագրված միջոցներով: Ֆինանսական աջակցությունը տրամադրվել է զինհաշմանդամություն ձեռք բերած ԶԱՀ շահառուներին Արցախի, Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի, Արմավիրի և Լոռու մարզերից, ովքեր ունեն 3 և ավելի անչափահաս երեխաներ կամ գտնվում են ֆինանսական ծանր կացության մեջ: Նշված զինհաշմանդամ զինծառայողներին փոխանցվել է 120,000 ՀՀ դրամ անմիջապես նրանց բանկային հաշիվներին կամ Հայփոստի կանխիկ փոխանցումների ծառայության միջոցով:

Ֆինանսական աջակցության նախաձեռնությունը փոխըմբռնման հուշագրի շրջանակներում է, որը ստորագրվել է 2021թ. ԶԻՆԱՊԱՀԻ և Կարո Հովագիմյան բարեգործական հիմնադրամի միջև: Լիահույս ենք, որ համագործակցությունը շարունակվելու է:

Աջակցություն ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին՝ Canar Ծրագրային ապահովման զարգացման կենտրոնի և Ուսումնական Առաքելություն հիմնադրամի հետ համատեղ

Canar Software Deployment ՍՊԸ-ի նախագահ Կարեն Մամասախլիսովի և Ուսումնական առաքելություն ՀԿ-ի տնօրեն Զառա Ծահինյանի կողմից ստորագրվել է նվիրատվության պայմանագիր:

6 համակարգիչ և 4 էկրան է տրամադրվել ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին, ովքեր ունեն զարգացման ներուժ, սակայն չունեն համակարգիչ ձեռք բերելու միջոցներ, որպեսզի իրենց ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնեն:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն

Փոխըմբռնման հուշագիր Արցախի սոցիալական զարգացման ծրագրերի հիմնադրամի (ՀԶԾՀ) հետ

2023թ. հունվարի 17-ին ԶԻՆԱՊԱՀԸ փոխըմբռնման հուշագիր է ստորագրել **Արցախի սոցիալական զարգացման ծրագրերի հիմնադրամի հետ՝** ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների համար սոցիալական զարգացման գործողություններ իրականացնելու նպատակով:

Փոխըմբռնման հուշագիր Հայ կրթական հիմնադրամի հետ

2023թ. փետրվարի 13-ին ԶԻՆԱՊԱՀԸ փոխըմբռնման հուշագիր է ստորագրել **Հայկական կրթական հիմնադրամի** (ՀԿՀ) հետ: ՀԿՀ-ն ֆինանսական օգնություն կտրամադրի հայկական կրթական հաստատություններին և կաջակցի զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին կրթություն ստանալու նպատակով:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԶԻՆԱՊԱՀԻ և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հետ համատեղ ծրագիր՝ Թվային միասնական հարթակ

Համաձայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հետ 2022թ. սեպտեմբերի 29-ի փոխըմբռնման հուշագրի՝ ստեղծվելու է միասնական թվային հարթակ՝ հանրային և մասնավոր հատվածի համագործակցության համար որպես գործիք, որը կմիավորի բոլոր այն կազմակերպություններին, որոնք ինքնուրույն իրականացնում են տարբեր սոցիալական, կրթական, վերականգնողական և այլ ծրագրեր, ինչպես նաև տրամադրում են կրթական և վերապատրաստման ծրագրերին ուղղորդող տարբեր ծառայություններ՝ համաձայն զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կարիքների գնահատման: Հարթակի նախատիպը ստեղծվել է և քննարկվում է մասնակից կողմերի հետ՝ ամբողջական տեխնիկական լուծում ունենալու և կայքի պատրաստումը մեկնարկելու համար:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավորական սկզբունքով և 2021թ. սկսած ԶԻՆԱՊԱՀԸ տարանջատվում է ԿԲ-ից՝ դառնալու անկախ իրավաբանական անձ՝ իր սեփական ենթակառուցվածքով:

ԹԻՄ

- ԶԻՆԱՊԱՀԻ վերակառուցումը, որը կենտրոնանալու է ԶԻՆԱՊԱՀԻ հիմնական իրավասությունների վրա որպես ֆինանսական հաստատություն, ավարտվել է 2023թ. մարտի սկզբին և ներկայումս կառավարվում է 13 հոգուց բաղկացած թիմի կողմից
- Դոնորների հետ կապերի և ֆոնդերի հավաքագրման մենեջերի հավաքագրում
- Կազմակերպչական ձեռնարկի մշակում
- Կատարողականի մշակման և գնահատման համակարգի փորձնական ներդրում թվային Teamflect համակարգով
- Ղեկավար մարմինն է՝ Հոգաբարձուների խորհուրդը 5 անդամներով

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ներդրումային քաղաքականության ընդունում
- Ներդրումային Կոմիտեի վերակազմավորում
- Սթրեսի սցենարների պլանավորում
- ԶԻՆԱՊԱՀ-ի ռեբրենդինգի պլանավորում
- Շահառուների միասնական հարթակի պլանավորում և ներդրում
- Աուդիտ 2022թ.

ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ՄՌ կառավարում
- Հաշվապահական ծառայություններ
- Հաճախորդների թեժ գիծ
- SS անվտանգություն
- Իրավախորհրդատու

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- Միգրացիա ԿԲ-ից
- ԶԻՆԱՊԱՀԻ կայքի (ենթակառուցվածքի) մշակման և սպասարկման Տեխն. Առաջադրանքի վերջնականացում և մրցույթ
- Բիզնես գործընթացների վերանախագծում և
- Վերաճարտարագիտություն և ավտոմատացում դրոշմանիշային վճարի վերադարձի պարտադիր գործընթացի ավտոմատացում
- Հատուցման համակարգի SS անվտանգություն

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գնումների ուղեցույցի մշակում և ներդրում
- Նամականիշերի վերադարձի կանոնակարգ
- Գործադիր կոմիտեի ակտիվացում և Ներդրումային գործադիր կոմիտեի անդամի փոփոխության որոշում
- ԶԻՆԱՊԱՀԻ օրենքի փոփոխություն՝ աջակցելու հաշմանդամության կարգավիճակի փոփոխությանը երկրորդից երրորդ կարգի դեպքում
- Շահառուների փոխհատուցման դեպքի փոփոխության ՀԽ որոշում
- Ներդրումային գործադիր կոմիտեի անդամի փոփոխության որոշումը

ԶԻՆԱՊԱՀԻ 2022թ. աուդիտն իրականացրել է **Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ն**, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի («ՄՀՍԽ») կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով:

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին և կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները եվ անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին Զինծառայողների Ապահովագրության հիմնադրամի մասին: Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում:

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրաբերությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի:

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին:

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ